Բազիլեան միսիոնարները Նուշիում հաստատուելուց յետոյ 1828 թուից սկսած՝ ինչպէս առաջ յիշեցի՝ ժամանակ առ ժամանակ առաքելութեամբ շրջում էին Կովկասու գաւառներն, ի թիւս որոց և Շամախի քաղաքը։ Նոցա մուտքն այս քաղաքը (Շամախի) առաջին անգամն եղաւ 1828 թուին։ Երկրորդ անգամը նոքա եկան 1832 թուականին։ Դլխաւորն էր դարձեալ Ֆիլ—Զարեբա, որին ընկերակցում էին Աւգուստ Դիտրիխ և Միրզաֆարուխ[1]։ Վերջինս (շուշեցի հայ) տեղական լեզուներին և հանգամանքներին քաջ տեղեակ լինելով մեծ ծառայութիւն էր մատուցանում քարոզիչներին։

«Հենց առաջին օրերից այս քարոզիչները կարողացան գրաւել մի խումբ հայեր։

Այս մարդկանց մէջ այքի ընկնողներն էին տիրացու Առաքել Բէչարայենց ուսուցիչ, Գէորգ Համբարձումեանց հրացանագործ, տիրացու Գալուստ Բուդաղեանց, Դիւրգեար (հիւսն) Ոսկան, վիզը ծուռ Եսային համեստագործ (փալանդուզ), Ռուստամն քեռխա Գաբրիէլեանց, Կոշկակար Թարվէրդին, պարոն Հայրապետան Թառայեանց և սորա եղբայր Առաքելն և այլք ոմանք Շամախեցիք։ . . .

ԳԼՈՒԽ Ե. 38. «Հեռացան գնացին Շամախուց Զարեմբան և իւր գործակիցները . . . սակայն կասկածներ զարթեցան յիշեալ խմբի վրայ, մինչեւ այս անգամ Միքայէլ քահանայ Վարշամեանցը տեղեկութիւն տուեց Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսին 1833 թուին, որը ուղարկեց Շամախի Զաքարիա եպիսկոպոսին . . . որ վերահասու լինի Շամախու քարոզիչների գործողութեանց։

Այս եպիսկոպոսը մի օր գնալով տիրացու Առաքել Բէչարայենց դպրոցը՝ աշակերտներին հարց ու փորձ է անում և ի թիւս այլոց առաջարկում է նոցա հետեւեալ հարցը. —«Ի՞նչ է նշանն Քրիստոսի»։ Աշակերտները չեն կարողանում պատասխանել։ Սրբազանը զայրանում է և աշակերտների ու հետաքրքիր այցելուների ներկայութեամբ խրատում է ուսուցչին երկու ապտակով,

[1])Որ է հայրն Աբրահամ Ամիրխանեանցի։